<table>
<tr><th colspan="4">ՏԵԽՆԻԿԱԿԱՆ-ԱՌԱՋԱԴՐԱՆՔ-1</th></tr>
<tr><th>N/N</th><th>անվանումը/տեխնիկական բնութագիրը</th><th>չափման միավորը</th><th>քանակը</th></tr>
<tr><th>1</th><th>2</th><th>3</th><th>4</th></tr>
<tr><th colspan="4">1. ԲՈՒԺԿԵՏ</th></tr>
<tr><td>1.1</td><td>Ապակե պահարան՝ առաջին օգնության անհրաժեշտ դեղորայքի համար՝ ՀՀ Կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 20-ի N1239-Ն որոշման, ՀՀ Առողջապահության նախարարության N867 հրամանի պահանջներին համապատասխան: Բժշկական պարագաների պահարանի արտաքին նվազագույն չափսերն են՝ 600x450x900 մ ( ԼxԽxԲ): Պահարանի կմախքը և ոտքերը ամբողջությամբ պետք է պատրաստված լինեն մետաղական քառանկյուն խողովակներից (25x25x2.0) մմ՝ զոդման եղանակով, անկյունների միացումը կատարվում է 45 աստիճան հատվածքով, իսկ ծածկը և պատերը 1.0-1.2 մմ հաստության մետաղական թիթեղից: Պահարանը ամբողջ բարձրությամբ բաժանված է երեք հավասար, թրծած ապակուց շարահարթակների և ունի բանալիով փակվող երկու ապակե դուռ, որոնցից յուրաքանչյուրը ամրանում է երեքական ծխնիներով: Զոդման կարանները պետք է լինեն մշակված և ողորկ: Պահարանի կմախքին զոդման միջոցով ամրացվում են 200 մմ բարձրությամբ մետաղական ոտքերը, որոնց եզրերը պետք է խցանված լինեն 8 մմ հաստությամբ պլաստիկե խցաններով: Կմախքը, ոտքերը, ծածկն ու պատերը ամբողջությամբ պետք է լինեն փոշեներկված արծաթափայլ կամ սպիտակ գույնի ջրակայուն որակյալ ներկով:</td><td>հատ</td><td>1</td></tr>
<tr><td>1.2</td><td>Էլեկտրոնային կշեռք, պատվանդանի չափերը՝ (450x550)մմ, կշեռքի քաշը՝ 15-25կգ: Կշռում է 0-ից-150կգ: Ուղղանկյունաձև հարթակով, կանգնակով, ունի ապակյա էկրան՝ թվային ցուցիչով:<br>Նմուշը /նկար-1/ կցվում է:<br>Պայմանագրի կատարման փուլում պարտադիր է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի առկայությունը:</td><td>հատ</td><td>1</td></tr>
<tr><td>1.3</td><td>Հասակաչափ՝ ինքնակպչուն հասակաչափը պատրաստված է էկոլոգիապես մաքուր հումքից՝ բնական մանրաթելերից բաղկացած ֆլիզիլինի հիմքով վինիլային պաստառից: Այն հեշտությամբ փակցվում է պատի հարթ մակերեսին: Հանելիս, պոկելիս չի պատռվում և պատին հետքեր չի թողնում:<br>Նմուշը /նկար-2/ կցվում է:</td><td>հատ</td><td>1</td></tr>
<tr><td>1.4</td><td>Տեսողության ստուգման աղյուսակ (Օրլովայի կամ Գոլովին-Սիվցևի աղյուսակ)՝ ՀՀ Կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 20-ի N 1239-Ն որոշման, ՀՀ Առողջապահության նախարարության N867 հրամանի պահանջներին համապատասխան:Այս աղյուսակը պարունակում է տպագիր տառերի տողեր (ընդհանուր 12 տող), ընդորում, տառերի չափը վերևից ներքև տողից տող փոքրանում է: Յուրաքանչյուր տողի ձախ կողմում նշված է այն D հեռավորությունը (մետրերով), որից նորմալ տեսողությունունեցող անձը պետք է տեսնի դրանք (վերևի շարքի համար՝ 50.0 մետր, ներքևիհամար՝ 2,5մ): Յուրաքանչյուր տողի աջ կողմում նշված է V մեծությունը (պայմանական միավորներով). դա 5 մետր հեռավորությունից տառերը կարդալուտեսողության սրությունն է (0,1, եթե աչքը տեսնում է միայն վերևի շարքը, 2,0, եթետեսնում է ներքևի շարքը): Տեսողությունը համարվում է նորմալ (1,0), երբ մարդը յուրաքանչյուր աչքով 5 մետր հեռավորությունից տեսնում է տասներորդ տողը: Տառերի չափը որոշակի տողում հաշվարկելու համար (մոտ 1 միլիմետր սխալիդեպքում) անհրաժեշտ է, ըստ -ի մեծության, բաժանել 7 միլիմետր սանդղակով: Այսպես, վերևի տողում տառերի չափը կլինի 70 միլիմետր (V = 0.1), իսկ ներքևում՝ 3,5 միլիմետր ( V = 2 ): Մեկ այլ հեռավորությունից տեսողության սրության ուսումնասիրության ժամանակ (0,1-ից պակաս, եթե մարդը 5 մետրից չի ճանաչում վերևի շարքի տառերը) հետազոտվողանձին մոտեցնում են աղյուսակին և յուրաքանչյուր 0,5 մետրից հետո հարցնում, մինչևնա ճիշտ կանվանի վերևի շարքի տառերը: Տեսողության սրության չափը հաշվում են հետևյալ բանաձևով. V = d/D, որտեղV՝ տեսողության սրություն, հեռավորությունը, որից կատարվում է հետազոտությունը, հեռավորությունը, որի դեպքում նորմալ աչքը տեսնում է այս շարքը: Տպագրությունը պետք է կատարված լինի որակյալ նյութերով՝ ստուգման ժամանակ աչքի համար լրացուցիչ լարվածություն չստեղծելու նպատակով: Օգտագործվող նյութերը պետք է լինեն բարձրորակ և մաշակայուն: Նմուշները պետք է մինչ մատակարարում համաձայնեցվեն պատվիրատուի հետ և առաջին իսկ պահանջի դեպքում՝ պետք է ներկայացվի ապրանքի համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն): Պետք է սահմանվի երաշխիքային սպասարկում՝ առնվազն 1 տարի, արտադրական թերությունների և հնարավոր անհամապատասխանությունների վերականգնման, վերանորոգման և/կամ փոխարինման նպատակով:<br>Նմուշը /նկարը-3/ կցվում է:<br>Պայմանագրի կատարման փուլում պարտադիր է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի առկայությունը:</td><td>հատ</td><td>1</td></tr>
</table>

***Ծանոթություն՝ նմուշ նկարները փրվում են զուտ ընդհանուր պատկերացում կազմելու նպատակով և չեն կազմելու հետագայում կնքվող պայմանագրի մաս:***

| | |
|---|---|
| **Նմուշը /նկար-1**  | **Նմուշը /նկար-2**  |
| **Նմուշը /նկար-3**   | |

**«ԷԿՈ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ-ի տնօրեն** ________________________ **Ա. Գասպարյան**

(ստորագրությունը)

Digitally signed by VARDANYAN HAYK 3503920730
Date: 2025.10.20 17:28:53 AMT